

ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄԵՆՔ ԿԱՌՈՒՅԵԼ ԱՐԴԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանության ժամանակ՝ 5 րոպե

«Երբ անարդարությունը հասնում է որոշակի մակարդակի, նույնիսկ զինվորներն ու ոստիկաններն են հրաժարվում ենթարկվել, ինչպես վկայում են Ֆրանսիական, Ռուսական, Չինական, Հնդկա-չինական և այլ հեղափոխությունները... Այն պահից, երբ պետությունը, դատաւարը չափազանց ուժեղ, չափազանց թույլ կամ չափազանց վատ կառավարվող, դադարում է իր քաղաքացիների մեջ արդար կառավարվելու հավատ ներշնչել, նրանք իրավունք ունեն փոփոխություն պահանջելու՝ խաղաղ ճանապարհով, եթե դրա համար կա համապատասխան գործիքակազմ, կամ ուժի միջոցով:

Ամեն տասը հոգու մեջ կգտնվի մի անմիտ, որն այս տողերից կեզրակացնի, թե ես հեղափոխություն եմ քարոզում՝ ճիշտ այնպես, ինչպես որոշ մարդիկ պնդում էին, որ ես խրախուսում էի քաղաքական սպանություններ: Ուստի արժի կրկնել. «Ես դեմ եմ բռնությանը: Եվ հենց այն կանխելու նպատակով է, որ ուսումնասիրում եմ այն պայմանները, որոնցում սովորաբար հասունանում է բռնությունը»:

Պիեռ Էլիոթ Թրյուդո, Կանադայի 15-րդ վարչապետ, կառավարել է 1968-1979 թթ.

Պլատոնը պնդում էր. «Պետություն ստեղծելու մեր նպատակը մի դասի անսահման երջանկությունը չէր, այլ բոլորի մեծագույն երջանկությունը. մենք կարծում էինք, որ պետության մեջ, որն ստեղծված է համընդհանուր բարօրության համար, մենք արդարություն գտնելու ավելի մեծ հավանականություն կունենայինք»: Զսանչորս դար անց մարդիկ դեռևս փորձում են գտնել այդ արդարությունը: Ամեն ինչ՝ պատվաստումների անձնագրերից մինչև միջազգային հակամարտություններ, այն մասին են, թե ինչն է արդար, ինչը՝ անարդար:

Արդար հասարակությունը նաև անհավասարությունների և սոցիալական շարժունության մասին է: Այն արագությունն ու դյուրինությունը, որով աղքատ ընտանիքում ծնված երեխան կարող է բարձրանալ սոցիալական աստիճանակարգով, արդար հասարակության ամենակարևոր ցուցիչներից մեկն է:

Ահավասիկ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) սոցիալական շարժունությանը նվիրված գեկույցը փաստում է, որ ծնողների կրթության մակարդակն ուղիղ ազդեցություն ունի երեխաների կրթության վրա: Ընտանիքներում, որտեղ ծնողները չունեն բարձրագույն կրթություն, երեխաների միայն 10%-ն է ստանում համալսարանական կրթություն՝ ի տարբերություն այն 65% երեխաների, որոնք ունեն բարձրագույն կրթությամբ ծնողներ: Իր հերթին, կրթության մակարդակը սահմանում է այն արագությունը, որով երեխան կարող է բարձրանալ դեպի սոցիալական աստիճանակարգի բարձունք: Հետևաբար, ժամանակակից, հասանելի և մատչելի կրթությունն արդար հասարակության ամենակարևոր որոշիչներից մեկն է:

Եկամտի, մասնագիտության և կրթության տեսանկյունից սոցիալական շարժունության ամենաբարձր մակարդակը Սկանդինավյան երկրներում է. ընդամենը երկու սերունդ է հարկավոր, որպեսզի աստիճանակարգի ամենացածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները կարողանան հասնել աստիճանակարգի միջին մակարդակին (ավելի մանրամասն տե՛ս Գծապատկեր 1-ում):




Թարգմանություն.
Բնօրինակը
անգլերենով է



FUTURES STUDIO

Think to connect!

Գծապատկեր 1. Առաջընթացի համար անհրաժեշտ սերունդների քանակը



*Սերունդների ակնկալվող քանակը, որը կպահանջվի հասարակության ստորին շերտի 10%-ի ընտանիքների ժառանգներից միջին եկամտի աստիճանի հասնելու համար:

Աղբյուր՝ SZՉԿ (2018 թ.), «Կոտրված սոցիալական վերելակ: Ինչպե՞ս խթանել սոցիալական շարժունությունը»

Եզրակացություն

Արդար հասարակության հայեցակարգն ինքնին բարդ հասկացություն է: Մենք փորձել ենք անդրադառնալ այս հարցին մեր գեկույցներում: Ստորև մենք վերարտադրել ենք նախկինում մեր ներկայացրած դիագրամներից մեկը, քանզի հավատացած ենք, որ այն ամենից շատ է համապատասխանում արդար հասարակության թեմային:

Դիագրամ 1. Էկոհամակարգի չորս հենասյուները¹



*Դավիթ Թամադյան
Հիմնադիր գործընկեր*

¹ [What is an Ecosystem?](#)

Դրույթներ և պայմաններ

© «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: